ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/209

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.05.2022թ. թիվ 26/26-1/8387-2022 գրությամբ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 02.05.2022թ. թիվ ՍՄ//11952-2022 գրության հիման վրա, 10.05.2022թ. թիվ 26/26-1/8387-2022 գրությամբ նախաձեռնել է «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 06.06.2022թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ենթակայության «Գյումրու երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ՊՈԱԿ) թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-4-2» և թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-5-1» ծածկագրերով կնքված պայմանագրերը լուծել է անհիմն, չունենալով որևէ իրավական հիմք: Ներկայացնում ենք ստորև՝

1) ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ Նախարարությունը հայտնել է, որ իբր մենք բանավոր հրաժարվել ենք մատակարարումներ իրականացնել, այն դեպքում, երբ մենք չենք հրաժարվել, ինչպես նաև հրաժարվելու մասին ապացույց առկա չէ:

2) Նախարարության գրության բովանդակությունում առկա է հակասություն: Մի դեպքում Նախարարությունը նշում է, որ մենք հրաժարվել ենք, մյուս դեպքում նշում է, որ ՊՈԱԿ-ը ներկայացրել է գրություն ոչ պատշաճ մատակարարումներ իրականացելու վերաբերյալ: Հարց է առաջանում, հիմա մենք հրաժարվել ենք, թե մեր մատակարարված ապրանքները եղել են ոչ պատշաճ, որի մասին նույնպես ապացույց առկա չէ:

3) ՊՈԱԿ-ը չի դիմել Նախարարությանը թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-4-2» և թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-5-1» ծածկագրերով կնքված պայմանագրերը լուծելու խնդրանքով: ՊՈԱԿ-ի նախարարությանը ուղղված գրությունը վերաբերում է միայն թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-3-1» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագրի լուծելուն:

4) «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-3-1» ծածակագրով պայմանագրի վերաբերյալ հայտնում ենք, որ, ինչպես ՊՈԱԿ-ն է գրությամբ նշել, որ մեր կողմից իրականացվել են մատակարարումներ ու որոնց մասով դուրս են գրվել հաշիվ ապրանքագրեր:

5) ՊՈԱԿ-ի նախարարությանը ուղղված գրության բովանդակությունից պարզ է դառնում, որ ոչ մի համաձայնագրի չներկայացման հարց չի առաջացել հակառակը

ՊՈԱԿ-ը պնդում է, որ «... մատակարարը նախնական պատվերի հիման վրա 08.04.2022թվականին իրականացրել է հերթական մատակարարումը...»:

6) ՊՈԱԿ-ի նախարարությանը ուղղված գրության բովանդակությունը այլ է, Նախարարության ՀՀ ֆինանսների նախարարության գրության բովանդակությունը այլ: ՊՈԱԿ-ի գրության նշվում է ոչ պատշաճ որակի (քանակի պակասի) ապրանքների մատակարարման մասին, իսկ Նախարարության գրությամբ շտկված համաձայնագրի չներկայացված լինելու հանգամանքների մասին: Երկուստեք էլ ապացույցներ չեն ներկայացվել:

7) Ապացույց չի ներկայացվել որ մեր ընկերությունը ծանուցվել է ոչ պատշաճ որակի (քանակի պակասի) ապրանքների մատակարարման մասին: Ապացույց չի ներկայացվել որ մեզ տրվել է ժամկետ անպատշաճ որակի ապրանքը պատշաճ որակի ապրանքով փոխարինելու համար: Ապացույց չի ներկայացվել, որ մեզ տրվել է խախտումներով ներկայացված համաձայնագիրը ներկայացնելու ժամկետ:

8) էլ չասենք, որ չի ներկայացվել ապացույց, որ նվազ է մատակարարվել հայցվող ենթադրյալ ապրանքը, կամ մենք չենք պատասխանում զանգերի (այն դեպքում, երբ մենք շահագռգռված ենք ապրանքի մատակարարմամբ ու գումար վաստակելով), բանավոր ում են տեղեկացրել, ևս պարզ չէ, կամ ինչու են բանավոր տեղեկացրել և ում են տեղեկացրել, այն դեպքում, երբ կարող էին գրավոր տեղեկացնել, և այլ նմանատիպ հարցեր:

9) Նշենք նաև, որ ՊՈԱԿ-ը Նախարարությանը առաջարկել է մեր հետ միակողմանի լուծել պայմանագիրը՝ Գնումների մասին օրենսդրության և պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձան՝ ապրանքի մատակարարման ժամկետը 5 օր և ավելի խախտված լինելու հիմքով, այլ ոչ թե համաձայնագիր չներկայացնելու կամ ինչպես Նախարարությունն է իր գրությամբ նշել շտկված համաձայնագիրը չներկայացնելու հիմքով:»:

«Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/209 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 15:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.05.2022թ. թիվ ՍՄ//11952-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ենթակայության «Գյումրու երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) և «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ կազմակերպություն) հետ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կնքվել է՝ 2022 թվական մարտի 17-ին սննդամթերքի կարիքների բավարարման նպատակով «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-3-1» ծածկագրով պայմանագիրը, սակայն լուծում ենք ամբողջությամբ մասնակցի կողմից չի ներկայացվում շտկված տուժանքի մասին համաձայնությունը՝ որակավորման և պայմանագրի ապահովումների տեսքով (միակողմանի հաստատված): 2022 թվականի մարտի 24-ի «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-4-2» և 2022 թվականի ապրիլի 26-ի «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-5-1» ծածկագրերով կնքված պայմանագրերը լուծում ենք ամբողջությամբ, կազմակերպությունը բանավոր հրաժարվում է ՊՈԱԿ-ին ապրանք մատակարարելուց, իսկ ՊՈԱԿ-ը հանդիսանալով պատասխանատու ստորաբաժանում ներկայացրել է գրություն ոչ պատշաճ մատակարարումներ իրականացելու վերաբերյալ և դիմել է վերադաս պատվիրատուին պայմանագիրը միակողմ լուծելու համար:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը նախաձեռնելու նպատակով, Ձեզ եմ ներկայացնում վերոնշյալ գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի փաթեթը:»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/209 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 15:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/209 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/209 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 17.03.2022թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-3-1», 24.03.2022թ. կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-4-2» և 26.04.2022թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-5-1» ծածկագրերով պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրեր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որոնց 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. Պայմանագրի N 2 հավելվածով սահմանվել է, որ ապրանքի մատակարարումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման (պատվիրատուի գնման հայտի) հիման վրա և համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 30.12.2022թ.:

3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակա «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ-ի կողմից նույն նախարարությանն ուղղված գրության համաձայն՝ «Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար 17.03.2022 թվականին «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-3-1» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագրի շրջանակներում մատակարարը՝ նախնական պատվերի հիման վրա 08.04.2022 թվականին իրականացրել է հերթական մատակարարումը, սակայն դուրս գրած հաշիվ-ապրանքագրի մեջ եղած սննդամթերքից չի մատակարարվել 50 կգ «Միս տավարի փափուկ» չափաբաժինը, ինչպես նաև չի ներկայացվել հանձնման-ընդունման արձանագրությունը և ակտը, ինչի մասին բանավոր տեղեկացվել է մատակարարին և նա խոստացել է լրացնել չմատակարարված ապրանքը, սակայն մինչ օրս ապրանքը չի մատակարարվել, մատակարարը մեր զանգերին չի պատասխանում, իսկ հաստատության պահեստում առկա մնացորդը այսօր վերջանում է: Ուստի առաջարկում եմ անբարեխիղճ մատակարարի հետ միակողմանի լուծել պայմանագիրը Գնումների մասին օրենսդրության

և պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետը 5 օր և ավելի խախտված լինելու հիմքով: Նաև ցանկանում ենք նշել, որ կա վտանգ, որ պայմանագրով սահմանված մյուս ապրանքների մասով ևս պատշաճ մատակարարում կարող է չիրականացվել: Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով, որ մինչ օրս «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտ մի շարք սննդամթերքների մասով մատակարարման պայմանագիր դեռևս առկա չէ, ուստի խնդրում ենք Ձեր միջնորդությունը և թույլտվությունը, որպեսզի ներքոհիշյալ ապրանքների մասով հաստատությունը Մեկ անձից կատարի գնում կազմակերպության բնականոն գործունեության ապահովման նպատակով: Ստորև ներկայացնում ենք շուրջ մեկ ամսվա համար անրաժեշտ ապրանքատեսակների քանակները և հայտնում, որ խնդիրը շատ հրատապ է ու այսօր ևեթ ունենք դրա կարիքը»:

4. Պատվիրատուն «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ենթակայության «Գյումրու երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) և «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ կազմակերպություն) հետ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կնքվել է՝ 2022 թվական մարտի 17-ին սննդամթերքի կարիքների բավարարման նպատակով «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-3-1» ծածկագրով պայմանագիրը, սակայն լուծում ենք ամբողջությամբ մասնակցի կողմից չի ներկայացվում շտկված տուժանքի մասին համաձայնությունը՝ որակավորման և պայմանագրի ապահովումների տեսքով (միակողմանի հաստատված): 2022 թվականի մարտի 24-ի «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-4-2» և 2022 թվականի ապրիլի 26-ի «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-5-1» ծածկագրերով կնքված պայմանագրերը լուծում ենք ամբողջությամբ, կազմակերպությունը բանավոր հրաժարվում է ՊՈԱԿ-ին ապրանք մատակարարելուց, իսկ ՊՈԱԿ-ը հանդիսանալով պատասխանատու ստորաբաժանում ներկայացրել է գրություն ոչ պատշաճ մատակարարումներ իրականացելու վերաբերյալ և դիմել է վերադաս պատվիրատուին պայմանագիրը միակողմ լուծելու համար:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու

նպատակով կազմակերպության տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն որոշումը նախարարության կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 27.04.2022թ. հրապարակվել է Պայմանագրերը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

6. Ներկայացված հաշիվ-ապրանքագրերով թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-3-1» և թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-4-2» ծածկագրերով կնքված պայմանագրերի շրջանակներում Ընկերության կողմից կատարվել են մատակարարումներ, որոնք ընդունվել են «Գյումրու երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.05.2022թ. թիվ 26/26-1/8387-2022 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 02.05.2022թ. թիվ ՍՄ//11952-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը և կից նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 17.03.2022թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-3-1», 24.03.2022թ. կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-4-2» և 26.04.2022թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-5-1» ծածկագրերով պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրեր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որոնց 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը

պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Պայմանագրերի N 2 հավելվածով սահմանվել է, որ ապրանքի մատակարարումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման (պատվիրատուի գնման հայտի) հիման վրա և համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 30.12.2022թ.:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակա «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ-ի կողմից նույն նախարարությանն ուղղված գրության համաձայն՝ «Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար 17.03.2022 թվականին «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ- ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-3-1» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագրի շրջանակներում մատակարարը՝ նախնական պատվերի հիման վրա 08.04.2022 թվականին իրականացրել է հերթական մատակարարումը, սակայն դուրս գրած հաշիվ-ապրանքագրի մեջ եղած սննդամթերքից չի մատակարարվել 50 կգ «Միս տավարի փափուկ» չափաբաժինը, ինչպես նաև չի ներկայացվել հանձնման-ընդունման արձանագրությունը և ակտը, ինչի մասին բանավոր տեղեկացվել է մատակարարին և նա խոստացել է լրացնել չմատակարարված ապրանքը, սակայն մինչ օրս ապրանքը չի մատակարարվել, մատակարարը մեր զանգերին չի պատասխանում, իսկ հաստատության պահեստում առկա մնացորդը այսօր վերջանում է: Ուստի առաջարկում եմ անբարեխիղճ մատակարարի հետ միակողմանի լուծել պայմանագիրը Գնումների մասին օրենսդրության և պայմանագրի 2,1,7,1 կետի բ) ենթակետի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետը 5 օր և ավելի խախտված լինելու հիմքով: Նաև ցանկանում ենք նշել, որ կա վտանգ, որ պայմանագրով սահմանված մյուս ապրանքների մասով ևս պատշաճ մատակարարում կարող է չիրականացվել: Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով, որ մինչ օրս «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտ մի շարք սննդամթերքների մասով մատակարարման պայմանագիր դեռևս առկա չէ, ուստի խնդրում ենք Ձեր միջնորդությունը և թույլտվությունը, որպեսզի ներքոհիշյալ ապրանքների մասով հաստատությունը Մեկ անձից կատարի գնում կազմակերպության բնականոն գործունեության ապահովման նպատակով: Ստորև ներկայացնում ենք շուրջ մեկ ամսվա համար անրաժեշտ ապրանքատեսակների քանակները և հայտնում, որ խնդիրը շատ հրատապ է ու այսօր ևեթ ունենք դրա կարիքը»:

Պատվիրատուն «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ենթակայության «Գյումրու երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) և «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ կազմակերպություն) հետ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կնքվել է՝ 2022 թվական մարտի 17-ին սննդամթերքի կարիքների բավարարման նպատակով «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-3-1» ծածկագրով պայմանագիրը, սակայն լուծում ենք ամբողջությամբ մասնակցի կողմից չի ներկայացվում շտկված տուժանքի մասին համաձայնությունը՝ որակավորման և պայմանագրի ապահովումների տեսքով (միակողմանի հաստատված): 2022 թվականի մարտի 24-ի «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-4-2» և 2022 թվականի ապրիլի 26-ի «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-5-1» ծածկագրերով կնքված պայմանագրերը լուծում ենք ամբողջությամբ, կազմակերպությունը բանավոր հրաժարվում է ՊՈԱԿ-ին ապրանք մատակարարելուց, իսկ ՊՈԱԿ-ը հանդիսանալով պատասխանատու ստորաբաժանում ներկայացրել է գրություն ոչ պատշաճ մատակարարումներ իրականացելու վերաբերյալ և դիմել է վերադաս պատվիրատուին պայմանագիրը միակողմ լուծելու համար:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կազմակերպության տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն որոշումը նախարարության կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 27.04.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:</u>

Ներկայացված հաշիվ-ապրանքագրերով թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-3-1» և թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-4-2» ծածկագրերով կնքված պայմանագրերի շրջանակներում Ընկերության կողմից կատարվել են մատակարարումներ, որոնք ընդունվել են «Գյումրու երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից:

Հարկ եմ համարում հայտնել նաև, որ թե ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.05.2022թ. թիվ ՍՄ//11952-2022 գրությամբ և թե «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ուղղված գրությամբ վկայակոչված փաստական հանգամանքներն իրարամերժ են, հակասում են միմյանց և չեն հիմնավորվել՝ որևէ ապացույց ի հավաստումն հայտնածի չի ներկայացվել:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ 17.03.2022թ. կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-3-1», 24.03.2022թ. կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-4-2» և 26.04.2022թ. կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-5-1» պայմանագրերով ստանձնած պարտավորությունների խախտման փաստը, որպիսի պայմաններում միայն հնարավոր կլիներ օբյեկտիվորեն գնահատել վերջինիս գործողությունները (անգործությունը), հետևաբար առկա չեն «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.05.2022թ. թիվ 26/26-1/8387-2022 գրությամբ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**